## ԿԱՐԾԻՔ

Գայանե Կարենի Մելիքյանի իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված <<**Հանձնման (էքստրադիցիայի) գործընթացի կարգավորման առանձնահատկությունները ՀՀ քրեական դատավարությունում**>> վերտառությամբ թեկնածուական ատենախոսության մասին /Մասնագիտությունը՝ **ԺԲ.00.04.– Դատական իրավունք –** (դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն)

**Թեմայի արդիականությունը** չի առաջացնում որևէ կասկած, որովհետև նախ՝ գործնականում առաջացել են բազմաթիվ հարցեր, որոնք տեսական լուրջ ուսումնասիրության անհրաժեշտություն ունեն, երկրորդ՝ քրեական դատավարության նոր օրենսգրքում (2021թ.) միջազգային իրավական օգնության ինստիտուտը դուրս են մնացել նոր Օրենսգրքի կարգավորման շրջանակներից, երրորդ՝ մինչ այսօր գործում է ՀՀ քրեական դատավարության նախկին օրենսգրքի կարգավորումները և մշակվում է առանձին Օրենք միջազգային իրավական օգնության հարցերի վերաբերյալ: Նման ուսումնասիրությունը հնարավորություն կտա վեր հանել նաև նշված Օրենքի նախագծում տեղ գտած թերությունները և նպաստել կատարյալ օրենսդրություն ունենալուն:

Քանի որ միջազգային իրավական օգնության ինստիտուտն ունի միջազգային իրավական հիմքեր, մասնավորապես այդ ոլորտը կարգավորող բազմաթիվ միջազգային փաստաթղթեր վավերացվել են Հայաստանի Հանրապետության կողմից, ուստի կարևոր է նաև դրանց ուսումնասիրությունը, որը հնարավորություն կտա մեր օրենսդրությունը՝ այդ թվում

քրեադատավարական օրենսդրությունը համապատասխանեցնել միջազգային կարգավորումներին:

Վերը նշվածը վկայում է, որ Գայանե Մելիքյանի կողմից ընտրված թեման <<Հանձնման (էքստրադիցիայի) գործընթացի կարգավորման առանձնահատկությունները ՀՀ քրեական դատավարությունում>> վերտառությամբ գիտական հետազոտության համար բացառիկ արդիական է:

**Ատենախոսության թեմայի գիտական մշակվածության** աստճանն այնպիսին է, որ ճիշտ է, հանձնման (էքստրադիցիայի) գործընթացի կարգավորման հարցերի վերաբերյալ կան շատ ուսումնասիրություններ, սակայն հայրենական քրեական դատավարական իրավունքում այն միակ համալիր գիտական աշխատանքն է, որը ներկայացվել է պաշտպանության, բացի դրանից այսօր դատավարական գիտության զարգացումը թույլ է տալիս պնդել, որ սույն ատենախոսության շրջանակներում հետազոտության առարկա դարձած հարցերն ամբողջությամբ նորույթ են և ունեն տեսական կարևոր նշանակություն:

Աշխատանքում տեղ գտած հեղինակի հետևությունները, որոնք վերաբերում են հանձնման ինստիտուտի տեսական հիմքերի հիմնավորմանը հիմնված են ոչ միայն տեսական գրականության, այլև միջազգային և ներպետական պրակտիկայի և դրանից բխող դոկտրինալ մեկնաբանման վրա: Ուսումնասիրության շրջանակներում հեղինակի կողմից բարձրացվել են այնպիսի հարցեր, որոնք ունեն գործնական կարևորություն և օրենսդրական հրատապ լուծում են պահանջում:

**Հեղինակը մեթոդոլոգիական տեսանկյունից** շատ ճիշտ է ձևակերպել իր հետազոտության օբյեկտը, նպատակը և առարկան: Նպատակի իրականացումն ապահովվել է հետազոտության հիմքում դրված խնդիրներով, որոնք ըստ աշխատանքի բովանդակության ամբողջությամբ հաղթահարված են:

**Հետազոտության տեսական հիմքը** ուսումնասիրվող թեմային վերաբերող հայրենական և արտասահմանյան գիտնականների գիտական աշխատանքներ են, ինչպես նաև դատական որոշումներն ու նորմատիվ իրավական ակտերը, որոնց շրջանակը բավականին լայնածավալ է:

Հայրենական դատավարական գրականության մեջ Գայանե Մելիքյանի կողից բարձրացված հարցերը հիմնականում առաջին անգամ են գիտական մակարդակով և նման խորությամբ հետազոտվում:

**Աշխատանքի գիտական նորույթն** արտահայտվում է նրանում, որ հեղինակը միջազգային և ներպետական դատական պրակտիկայի և դրա դոկտորինալ մեկնաբանման միջոցով առաջին անգամ կատարել է հանձնման (էքստրադիցիայի) գործընթացի կարգավորման հարցերի համակարգային հետազոտություն, մասնավորապես ցույց տալով դրա պատմական զարգացումը, աշխարհում գործող մոդելները, հանձնման (էքստրադիցիայի) գործընթացի կարգավորման բնութագրական գծերը և զարգացման տեսլականը:

Անհրաժշտ է ընդունել, որ հեղինակի կողմից **պաշտպանության ներկայացված բոլոր դրույթներն** օժտված են գիտական նորույթով և միանշանակ ընդունելի են: Հետազոտվող թեմայի տարբեր ասպեկտների ուսումնասիրությունը թույլ է տվել հեղինակին անել եզրակացություններ, որոնք ունեն տեսական և գործնական նշանակություն: Մեր կարծիքով, հեղինակին հաջողվել է լուծել այն խնդիրները, որոնք անհրաժեշտ են քրեական դատավարության իրավունքի գիտության զարգացման համար, միաժամանակ քանի որ մշակվում է նոր Օրենքի նախագիծ, հետևաբար նաև օրինաստեղծ գործունեությանը տեսական աջակցության համար:

**Ատենախոսությունն իրենից ներկայացնում հասուն գիտական ուսումնասիրություն,** որի մասին են վկայում դրանում լուծում ստացած

գործնականում առաջացած խնդիրները, որոնք բավականին խոչընդոտներ են առաջացրել հանձման ենթակա ենթադրյալ հանցանք կատարած անձանց իրավունքների պաշտպանության տեսանկյունից:

**Հետազոտության արդյունքների փորձարկումը** կատարվել է տեսական և գիտագործնական կոնֆերանսներում, ամսագրերում և գիտական ժողովածուներում հրատարակված գիտական հոդվածներում, որոնք հայտնի են իրավական լայն հանրությանը:

**Ատենախոսությունը կառուցված** է ներածությունից, երեք գլուխներից, դրանցում ընդգրկված ինը պարագրաֆներից, եզրակացությունից և օգտագործված իրավական ակտերի, գրականության և պրակտիկ նյութերի ցանկից:

Ատենախոսության կառուցվածքը համապատասխանում է թեմային, դրա հետազոտման նպատակներին և խնդիներին: Ատենախոսության յուրաքանչյուր մաս սերտորեն կապված է մյուսների հետ, ինչը նշանակում է, որ հետազոտվող հիմնահարցերը գտնվում են միասնական օրգանական կապի մեջ:

**Աշխատանքի բովանդակությունից** հետևում է, որ այն կատարված է տեսական և գործնական բարձր մակարդակով, դրանում հանդիպում ենք բավականին հետաքրքիր առաջարկությունների, որոնք այսօր օրենսդրության մեջ ամրագրելու անհրաժեշտություն ունեն: Այսպես, արդարացի է հեղինակի այն պնդումը, որ նկատի ունենալով, որ ՀՀ Սահմանադրությունը արգելում է սեփական քաղաքացիների հանձնումը, ուստի կարևոր նշանակություն ունի հանձնամն ենթակա անձի քաղաքացիությունը որոշելու պահը: Սակայն ներպետական օրենսդրությամբ քաղաքացիությունը ստուգելու կապակցությամբ որևէ պահանջ ամրագրված չէ, միայն <<Հանձնման մասին>> եվրոպական կոնվենցիան է նախատեսում, որ քաղաքացիությունը պետք

ստուգվի որոշում կայացնելու ժամանակ: Ուստի տեղին է աշխատանքում տեղ գտած այն առաջարկությունը, որ անձի քաղաքացիությունը պետք է ստուգվի փաստացի հանձնումն իրականացնելուց առաջ անձի քաղաքացիությունը ստուգելու պահանջով: Անկասկած նշված հարցերը պահանջում են հրատապ լուծում, քանի որ հանձնելու մասին որոշումը կայացնելուց հետո անցնում է բավականին երկար ժամանակ և որի ընթացքում անձը կարող է ձեռք բերել ՀՀ քաղաքացիություն:

Ուշագրավ է աշխատանքում տեղ գտած այն առաջարկությունը, որը վերաբերում է հիվանդության հիմքով անձին չհանձնելուն: Մասնավորապես ՀՀ օրենսդրության մեջ նախատեսված չեն այն երաշխիքները, որոնք պետք է ապահովեն նշված հիմքով անձին չհանձնելու օրինականությունը և հիմնավորվածությունը: Աշխատանքում բավականին մանրամասն վերլուծվել է այն հարցը և առաջարկություն է արվել մշակել անձի մոտ հիվանդության առկայության ստուգման, համապատասխան փորձաքննությունների նշանակման, դրանց արդյունքների և վերջինիս տեղափոխման համատեղելիության գնահատման համապատասխան ընթացակարգերը:

Հարկադրանքի միջոցների, մասնավորապես կալանքի և ձերբակալման հետ կապված աշխատանքում հանդիպում ենք մի քանի առաջարկությունների, որոնք կարևոր են գործնականում առաջացած խնդիրների լուծման և քրեական դատավարության գործող օրենսգրքի հետ հակասություններ չունենալու համար:

Աշխատանքում կարելի է հանդիպել ուշադրության արժանի բազմաթիվ այլ առաջարկությունների, որոնք կարևոր նշանակություն ունեն նշված ինստիտուտի արդյունավետ կիրառության համար:

Պաշտպանության ներկայացված հիմնահարցերի վերաբերյալ մենք պաշտպանում ենք հեղինակի բոլոր դիրքորոշումները: Չնայած այն բանին, որ

աշխատանքը կատարվել է բավականին բարձր մակարդակով, այնուամենայնիվ աշխատանքում կան դրույթներ, որոնք վիճահարույց են:

1. Կարծում ենք, որ վիճահարույց է հեղինակի այն առաջարկությունը, որը կապված է նշված ինստիտուտի անվանման փոփոխության հետ: Հեղինակը տարանջատում է և գտնում է, որ <<հանձնում>> և <<էքստրադիցա>> հասկացությունները պետք է տարանջատել և օգտագործել ըստ իրենց նպատակային նշանակության, իրականում կարծում ենք, որ դրանք նույնական հասկացություններ են և տարանջատելու խնդիր չկա, քանի որ երկու դեպքում էլ խոսքը վերաբերում է ենթադրյալ հանցանք կատարած կամ արդեն դատավապարտված անձնաց հանձնման մասին: Իրականում տեսականորեն, երբ խորանում ենք, կարող է որոշակի տարբերություններ լինել, բայց դրանք այնքան չնչին են, որ հարկ չկա այդ հասկացությունների տարանջատման, քանի որ միջազգային իրավական ակտերում դրանք օգտագործվում են որպես համարժեք հասկացություններ և օրենսդրության մեջ դրանց տարանջատումը կարող է հետագայում խնդիրներ առաջացնել:

2. Հեղինակը նշված ինստիտուտի իրավական բնույթից ելնելով քննարկման առարկա է դարձրել այն հարցը, թե այն իրավունքի որ ճյուղի կարգավորմանն է պատկանում: Իրականում այս հարցը կարևոր է, քանի որ քրեական դատավարության նոր օրենսգրքում քրեական վարույթներով իրավական օգնություն ցույց տալու իրավական կարգավորում նախատեսված չէ և այսօր այդ հարցերը կարգավորում են նախկին քրեական դատավարության օրենսգրքով: Համամիտ լինելով հեղինակի այն կարծիքին, որ քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալը քրեադատավական ինստիտուտ է, հեղինակը վերջնական առաջարկություն չի կատարում այն մասին, որ քրեական գործերով իրավական օգնության հարցերը, ճիշտ կլիներ, կարգավորել քրեական

դատավարության օրենսգրքով, քան թե առանձին օրենքով, քանի որ այն պետք է համահունչ լինի քրեական դատավարության օրենսգրքի կարգավորումներին:

3. Աշխատանքում բացակայում են այն իրավիճակների հետազոտումը, երբ երկրների միջև չկա իրավական օգնություն ցույց տալու մասին պայմանագրեր: Իրականում բավականին շատ են այն դեպքերը, երբ հանցանք կատարած անձինք փորձում են թաքնվել այն երկրներում, որոնց հետ Հայաստանի Հանրապետությունը չունի միջազգային պայմանագրեր:

4. Ցանկալի կլիներ, որ առավել մանրամասը քննության առարկա դարձվեր հանձնումը մերժելու կարևոր պայմաններից մեկը՝ քաղաքական հետապնդման հիման վրա հանձնաման մերժումը: Այսօր գործնականում շատ են այն դեպքերը, երբ քրեական հետախուզման մեջ գտնվող անձինք պատճառաբանություններ են ներկայացնում իրենց երկրներում քաղաքական հետապնդման ենթարկվելու մասին, չնայած մեղադրվում են այնպիսի ենթադրյալ հանցանքների մեջ, որոնք ընդհանրապես կապ չունեն քաղաքական երևույթների հետ: Պետք է նշել, որ այսօր Հայաստանի Հանրապետության շատ քաղաքացիներ, որոնք գտնվում են հետախուզման մեջ նույնպես այլ երկրներում նշված պատճառաբանությամբ չեն հանձնվում Հայաստանի Հանրապետությանը:

5. Աշխատանքը կշահեր, եթե հեղինակն առավել մանրամասն հետազոտության առարկա դարձներ հանձման պայմանները և բարձրացներ այն խնդրահարույց հարցերը, որոնք կապված են հանձնման առանձին պայմանների կիրառման հետ, օրինակ՝ եթե անձը այլ երկրում կարող է անմարդկային վերաբերմունքի արժանանալ կամ այդ երկրում անձի նկատմամբ կարող է մահապատիժ կիրառվել կամ եթե անցել են քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետները և այլն:

Վերը շարադրվածը մեզ հնարավորություն է տալիս գալ հետևյալ հետևության՝

1. Գայանե Կարենի Մելիքյանի <<Հանձնման (էքստրադիցիայի) գործընթացի կարգավորման առանձնահատկությունները ՀՀ քրեական դատավարությունում>> թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է **ԺԲ.00.04.- Դատական իրավունք** - (դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն) մասնագիտությանը:

2. Գայանե Կարենի Մելիքյանի <<Հանձնման (էքստրադիցիայի) գործընթացի կարգավորման առանձնահատկությունները ՀՀ քրեական դատավարությունում>> թեկնածուական ատենախոսությունը հանդիսանում է ինքնուրույն գիտահետազոտական աշխատանք, որում լուծվել են այնպիսի խնդիրներ, որոնք կարևոր նշանակություն ունեն քրեական դատավարության իրավունքի, մասնավորապես էքստրադիցիայի զարգացման համար: Նշված աշխատանքն առանձնանում է իր ներքին միասնությամբ, բովանդակում է նոր գիտական արդյունքներ, որոնք վկայում են քրեական դատավարության իրավունքի գիտության զարգացման մեջ հեղինակի համեստ ներդրման մասին:

3. Ատենախոսության նյութերն ամբողջությամբ ներկայացված են հեղինակի հրապարակումներում և հայտնի են իրավաբանական լայն հանրությանը:

Գայանե Մելիքյանի <<Հանձնման (էքստրադիցիայի) գործընթացի կարգավորման առանձնահատկությունները ՀՀ քրեական դատավարությունում>> թեկնածուական ատենախոսությունը **ԺԲ.00.04.- Դատական իրավունք** - (դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական

գործունեության տեսություն) մասնագիտությամբ համապատասխանում է ԲՈԿ-ի կողմից ներկայացվող պահանջներին, իսկ դրա հեղինակն արժանի է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման

**ԺԲ.00.04.– Դատական իրավունք –** (դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն) մասնագիտությամբ:

Պաշտոնական ընդդիմախոս՝
Երևանի պետական համալսարանի
քրեական դատավարության և
կրիմինալիստիկայի ամբիոնի վարիչ,
իրավաբանական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր
22.01.2024թ. Ս.Ա. Դիլբանդյան

Ս.Ա.Դիլբանդյանի ստորագրությունը
հաստատում եմ՝ ԵՊՀ իրավագիտության
ֆակուլտետի դեկանի տեղակալ,
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Հ.Մ. Խաչիկյան